«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«06» 10 2015թ.

Հաստատում եմ՝
Գնումների աջակցման կենտրոնի
պետի ժամանակավոր պաշտոնակատար
Հ. Թունյան

N ՍՑ-ԳԲԽ-03/13 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ու Թ Յ Ու Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ՀՀ ֆինանսների նախարարի 02.04.2012թ. N 1 պաշտոնական պարզաբանմամբ և հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության 21.06.2013թ. թիվ 1.1/13.1/8760-13 գրությամբ «Սիթի Պետրոլ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը 21.06.2013թ. թիվ 1.1/13.1/8760-13 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Սիթի Պետրոլ Գրուպ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

2. «Սիթի Պետրոլ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետը, կարծիք ստանալու նպատակով 31.07.2013թ. թիվ 09/032-1049 գրությամբ դիմել է «Սիթի Պետրոլ Գրուպ» ՍՊԸ-ին:

«Սիթի Պետրոլ Գրուպ» ՍՊԸ-ն 04.09.2013թ. թիվ 04/1 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«Սիթի Պետրոլ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/26» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում նախատեսված ապրանքը՝ ձմեռային դիզելային վառելիքը, համապատասխան քանակությամբ Հայաստանի Հանրապետություն է ներմուծվել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար: Նույն ձմեռային ժամանակաշրջանում տվյալ դիզելային վառելիքը օգտագործվել է ինչպես Երևանում և մարզերում, այնպես էլ ՀՀ բարձրադիր գոտիներում գտնվող լեռնահանքաարդյունաբերական հանքերում, որտեղ բնակլիմայական պայմանները գերազանցել են ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար

պահանջվող ցուցանիշները (այն է՝ 25% պղտորումը, իսկ սառեցումը՝ 35%), ինչի մասին պաշտոնապես հնարավոր է տեղեկանալ հիդրոմետ ծառայությունից:

«Սիթի Պետրոլ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից Հայաստանի Հանրապետություն ներմուծված դիզելային վառելիքը անցել է նաև ռուսական զինվորական փորձաքննություն՝ պահպանելով «ԳՈՍՏ» նորմատիվային ընթացքը, որը համապատասխանում է ՀՀ պաշտպանության նախարարության պահանջներին, սակայն անհասկանալի և անբացատրելի պատճառով ՀՀ պաշտպանության նախարարության կողմից չի ընդունվել:

«Սիթի Պետրոլ Գրուպ» ՍՊԸ-ն չի անդրադարձել ժամանակակից էլեկտրոնային և տպիչ սարքերի հնարավորությանը, որը հնարավորություն է տալիս բնօրինակից չտարբերվող ցանկացած փաստաթուղթ տպագրել և նարկայացնել որպես բնօրինակ՝ որպես հիմնավորող փաստաթուղթ սակավ որակական հատկանիշներ ունեցող ցանկացած ապրանքի համար:

«Սիթի Պետրոլ Գրուպ» ՍՊԸ-ն լրջորեն մոտենալով հարցի կարևորությանը և օրենքով ամրագրված պատասխանատվությանը, կատարելով լրացուցիչ ծախսեր, մեծ բարդություններով Հայաստանի Հանրապետություն է ներմուծել դիզելային վառելիք, քանի որ նմանատիպ «ԳՈՍՏ»-ի ապրանքները համարվում են ստրատեգիական և չեն արտահանվում այլ երկրներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերության կողմից բարեխղճորեն կատարվել է ձմեռային դիզելային վառելիքի ներմուծումը Հայաստանի Հանրապետություն և հետագայում վճարվել է բոլոր տույժերը և տուգանքները, «Սիթի Պետրոլ Գրուպ» ՍՊԸ-ն խնդրել է վերջինիս թողնել հնարավոր մասնակիցների ցանկում:

<u>3. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 31.07.2013թ. թիվ 09/032-1051 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու)՝ խնդրելով կարծիք տալ Ընկերությանը Ցուցակում ներառելու հարցի վերաբերյալ:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 20.09.2013թ. թիվ ԴՎԱ/2739 գրությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին է ներկայացրել «Սիթի Պետրոլ Գրուպ» ՍՊԸ-ի հետ 15.03.2012թ. կնքված ՇՀԱՊՁԲ-7/10-2 ծածկագրով պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտումները հիմնավորող փաստաթղթերը և պայմանագիրը միակողմանի լուծելու հիմքերը, ինչպես նաև պայմանագրի շրջանակում վերոհիշյալ կազմակերպության նկատմամբ հաշվարկված տույժերի, տուգանքների և դրանց վճարումների մասին տեղեկատվությունը:

4. ՍՑ-ԳԲԽ-03/13 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 21.06.2013թ. թիվ 1.1/13.1/8760-13 գրությամբ «Սիթի Պետրոլ Գրուպ» ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հեղուկ վառելիքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՇՀԱՊՁԲ-7/10-2» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

2. Ընթացակարգի արդյունքում ՀՀ պաշտպանության նախարարության և «Սիթի Պետրոլ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 02.07.2012թ. կնքվել է «ՇՀԱՊՁԲ-7/10-2» ծածկագրով պայմանագիր, որով նախատեսված 180.992.000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով ձմռային դիզելային վառելիքի մատակարարման ժամկետ է սահմանվել ***մինչև 2012թ. 3-րդ եռամսյակը՝ սեպտեմբերի 30-ը:***

3. Պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով, ձմեռային դիզելային վառելիքի սառեցման ջերմաստիճանը սահմանվել է ոչ բարձր 35 աստիճանից, իսկ պղտորման ջերմաստիճանը՝ ոչ բարձր 25 աստիճանից:

4. «Սիթի Պետրոլ Գրուպ» ՍՊԸ-ն 24.09.2012թ. թիվ 24/1 գրությամբ դիմել է Պատվիրատուին՝ հայտնելով, որ Ընկերության կողմից Հայաստանի Հանրապետություն է ներմուծվել եվրոպական ստանդարտներին համապատասխան բարձր դիմացկունությամբ դիզելային վառելանյութ, որի պղտորումը՝ 18 աստիճանից մինչև 20 աստիճան է, իսկ սառեցումը՝ 25 աստիճանից մինչև 28 աստիճան: Ընկերությունը հայտնել է, որ պատրաստ է 2 օրվա ընթացքում մատակարարել տվյալ վառելիքը, եթե այն ընդունելի լինի ՀՀ պաշտպանության նախարարության կողմից: Միաժամանակ հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ խնդրել է մատակարարման ժամկետը տեղափոխել 2012 թվականի հոկտեմբերի 30-ից մինչև նոյեմբերի 15-ը ընկած ժամանակահատվածը:

5. Պատվիրատուն 02.10.2012թ. թիվ ԴՎԱ/2754 գրությամբ «Սիթի Պետրոլ Գրուպ» ՍՊԸ-ին տեղեկացրել է, որ Ընկերության կողմից առաջարկված եվրոպական ստանդարտներին համապատասխան ցրտադիմացկունությամբ դիզելային վառելանյութը ՀՀ պաշտպանության նախարարության համար անընդունելի է, քանի որ որակական ցուցանիշներով չի համապատասխանում N ՇՀԱՊՁԲ-7/10-2 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը կազմող տեխնիկական բնութագրի պահանջներին՝ միաժամանակ հայտնելով, որ առաջարկված մատակարարման ժամկետների տեղափոխումը հնարավոր չէ իրականացնել, իսկ ժամկետների խախտման դեպքում կկիրառվեն պայմանագրով նախատեսված տուգանքները:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ անհրաժեշտ է ձեռնարկել անհապաղ միջոցներ և հնարավորինս սեղմ ժամկետում մատակարարել Պայմանագրին կից տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխան ձմեռային դիզելային վառելանյութ, հակառակ դեպքում ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամնետի կողմից կձեռնարկվեն համապատասխան միջոցներ:

6. 2012թ. նոյեմբերի 16-ին ընկերության կողմից առաջարկված դիզելային վառելիքի նմուշը ՀՀ ԶՈՒ ԹՎ ՎՔՆ ծառայության լաբարատորիայի կողմից կատարվել է փորձաքննություն, որի արդյունքում պարզվել է, որ ներկայացված դիզելային վառելքի նմուշը չի համապատասխանում պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով սահմանված ձմեռային դիզելային վառելիքի պահանջներին:

7. ՀՀ պաշտպանության նախարարությունը 27.11.2012թ. թիվ ԴՎԱ/3475 գրությամբ դիմել է «Սիթի Պետրոլ Գրուպ» ՍՊԸ-ին՝ հայտնելով, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը 02.07.2012թ. կնքված պայմանագրի 3.1.7.1 կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ 2012 թվականի նոյեմբերի 26-ին միակողմանի լուծել է 02.07.2012թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-7/10-2 ծածկագրով գնման պայմանագիրը՝ 358.4 տ ձմեռային դիզելային վառելիքի մասով:

8. Պայմանագրային պարտավորությունների խախտման հետևանքով Պատվիրատուի կողմից «Սիթի Պետրոլ Գրուպ» ՍՊԸ-ի նկատմամբ հաշվարկվել է 24.071.936 (քսանչորս միլիոն յոթանասունմեկ հազար ինը հարյուր երեսունվեց) ՀՀ դրամ, որից 18.099.200 (տասնութ միլիոն իննսունինը հազար երկու հարյուր) ՀՀ դրամը որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում և 5.972.736 (հինգ միլիոն ինը հարյուր յոթանասուներկու հազար յոթ հարյուր երեսունվեց) ՀՀ դրամը որպես տուգանք՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու համար:

9. «Սիթի Պետրոլ Գրուպ» ՍՊԸ-ն NN 150 և 151 վճարման անդորրագրերով ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական բաժանմունքի NN 5240511 և 5028106 հաշվեհամարներին համապատասխանաբար վճարել է 18.099.200 (տասնութ միլիոն իննսունինը հազար երկու հարյուր) և 5.972.736 (հինգ միլիոն ինը հարյուր յոթանասուներկու հազար յոթ հարյուր երեսունվեց) ՀՀ դրամ:

10. ՀՀ ֆինանսների նախարարությունը 21.06.2013թ. թիվ 1.1/13.1/8760-13 գրությամբ «Սիթի Պետրոլ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու նպատակով պաշտոնական ընթացակարգով Գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է բողոք:

11. ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը 25.07.2013թ. N 03/14/3963-13 գրությամբ դիմել է Կենտրոնին՝ հայտնելով, որ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության կողմից կազմակերպված ՀՀ ՏԿՆ-ՇՀԱՊՁԲ-11/1 ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Սիթի Պետրոլ Գրուպ» ՍՊԸ-ն՝ կցելով հայտի պատճենը:

5. ՍՑ-ԳԲԽ-03/13 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ նաև Կենտրոն) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 21.06.2013թ. թիվ 1.1/13.1/8760-13 գրությամբ «Սիթի Պետրոլ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 22.12.2012թ. ՀՀ ֆինանսների նախարարությանը ներկայացված թիվ ԴՎԱ/3880 և 20.09.2013թ. Կենտրոնին ներկայացված թիվ ԴՎԱ/2739 գրությունները, ՀՀ պաշտպանության նախարարության և «Սիթի Պետրոլ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 02.07.2012թ. կնքված N «ՇՀԱՊՁԲ-7/10-2» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր) և Պայմանագիրը միակողմանի լուծելու հիմքերը, հայտնում ենք հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 30-ի թիվ 105-Ն որոշման 7-րդ կետի համաձայն՝ մինչև նույն որոշումն ուժի մեջ մտնելն սկսված և չավարտված գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գնումների գործընթացը սկսելու պահին գործող իրավական ակտերով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (մինչև ՀՀ կառավարության 30.01.2015թ. 105-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների խմբագրությամբ, այսուհետև՝ նաև Կարգ) 149-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է՝ 3 տարի ժամկետով, եթե ավելի քան, մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայամանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով ***պատճառված վնասի, հաշվարկված տույժի կամ տուժանքի չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը:***

ՀՀ պաշտպանության նախարարության և «Սիթի Պետրոլ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 02.07.2012թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-7/10-2» ծածկագրով պայմանագրի 3.1.2 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի չընդունել Ապրանքն՝ իր հայացողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը նույն պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջապիտ ժամկետ և պահանջել Վճարողից վճարելու նույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը:

Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել նույն Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է նույն պայմանագիրը:

Պայմանագրի 3.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտել էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) բազմիցս խախտվել են Ապրանքի մատակարարման ժամկետները:

Պայմանագրի 7.4 կետի համաձայն՝ նույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում վաճարողից գանձվում է տուգանք՝ նույն պայմանագրի ընդհանուր գնի 0.5%-ի չափով:

Պայմանագրի 7.5 կետի համաձայն՝ Պատվիրատուի կողմից նույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Գնորդի նկատմամբ 2 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացած օրվա համար հաշվարկվում է տույժ՝ պայմանագրի չկատարման մասի գնի 0,05%-ի չափով:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Սիթի Պետրոլ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 02.07.2012թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-7/10-2» ծածկագրով պայմանագրով նախատեսված 180.992.000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով ձմռային դիզելային վառելիքի մատակարարման ժամկետ է սահմանվել մինչև 2012թ. 3-րդ եռամսյակը՝ սեպտեմբերի 30-ը:

Պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով, ձմեռային դիզելային վառելիքի սառեցման ջերմաստիճանը սահմանվել է ոչ բարձր 35 աստիճանից, իսկ պղտորման ջերմաստիճանը՝ ոչ բարձր 25 աստիճանից:

Այսպիսով, ՀՀ պաշտպանության նախարարության և «Սիթի Պետրոլ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 02.07.2012թ. կնքված N «ՇՀԱՊՁԲ-7/10-2» ծածկագրով պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով, Ընթացակարգի 1-ին (ձմեռային դիզելային վառելիք) չափաբաժնով 358.4 տ գնման ենթակա ապրանքը մատակարարվել է անպատշաճ որակի, որը չի փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում:

Բացի այդ, «Սիթի Պետրոլ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից խախտվել է նաև ապրանքի մատակարարման ժամկետը, որի արդյունքում Պատվիրատուի կողմից 26.11.2012թ. միակողմանի լուծվել է ՀՀ պաշտպանության նախարարության և «Սիթի Պետրոլ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 02.07.2012թ. կնքված պայմանագիրը:

«Սիթի Պետրոլ Գրուպ» ՍՊԸ-ն NN 150 և 151 վճարման անդորրագրերով ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական բաժանմունքի NN 5240511 և 5028106 հաշվեհամարներին համապատասխանաբար վճարել է 18.099.200 (տասնութ միլիոն իննսունինը հազար երկու հարյուր) և 5.972.736 (հինգ միլիոն ինը հարյուր յոթանասուներկու հազար յոթ հարյուր երեսունվեց) ՀՀ դրամ, ինչը հավաստել է նաև Պատվիրատուն:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտում թույլ տալուց հետո ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից հայտարարված ՀՀ ՏԿՆ-ՇՀԱՊՁԲ-11/1 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել, ուստի առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 21.06.2013թ. թիվ 1.1/13.1/8760-13 գրությամբ «Սիթի Պետրոլ Գրուպ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02705201) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ «Սիթի Պետրոլ Գրուպ» ՍՊԸ-ին 3 տարի ժամկետով ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչի ժ/պ Ռ. Մկրտչյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-03/13 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հովակիմյան